ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ18/30»

ք. Վանաձոր «28» փետրվար 2018 թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան -ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վ.ՆՍ ՍԵՐՎ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վահան Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձորի համայնքապետարանի ավտոմեքենաների պահեստամասերի փոխարինման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5500000(հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար՝ առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	**Վ.ՆՍ ՄԵՐՎ ՍՊԸ**
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	**Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ**
Կենտրոնական գանձապետարան	**Հայբիզնեսբանկ ՓԲԸ**
Հ/Հ900232351024	**Հ/Հ 1150002715650100**
ՀՎՀՀ 06901936	**ՀՎՀՀ 06940308**
----------Մ.Ասլանայն	----------Վ. Գրիգորյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 28» փետրվարի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ18/30 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	34331300	Տոյոտա Քամրի մակնիշի ա/մ ավտոպահեստամասերի փոխարինում	դրամ	1213500	1	Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ	28.02.2018 30.12.2018
2	34331300	Մերսեդես Բենց E300T մակնիշի ա/մ ավտոպահեստամասերի փոխարինում	դրամ	1161500	1	Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ	28.02.2018 30.12.2018
3	34331300	ԳԱԶ 3110-101 մակնիշի ա/մ ավտոպահեստամասերի փոխարինում	դրամ	1101000	1	Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ	28.02.2018 30.12.2018
4	34331300	ՎԱԶ 2107 մակնիշի ա/մ ավտոպահեստամասերի փոխարինում	դրամ	880500	1	Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ	28.02.2018 30.12.2018
5	34331300	ՎԱԶ 21214 մակնիշի ա/մ ավտոպահեստամասերի փոխարինում	դրամ	1143500	1	Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ	28.02.2018 30.12.2018

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան

Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

Հ/Հ900232351024

ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Վ.ՆՍ ՄԵՐՎ ՍՊԸ

Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ 1150002715650100

ՀՎՀՀ 06940308

----------Վ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

« 28» փետրվարի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀՇՁԲ18/30 *ծածկագրով պայմանագրի*

Ավտոմեքենաների ավտոպահեստամասերի փոխարինման ծառայությունների ձեռքբերում

SU-1,SU-2 Ծառայությունների անվանումները***	Ավտոմեքենաների ավտոպահեստամասերի փոխարինման ծառայությունների ձեռքբերում				
	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակը/ ըստ չափաբաժինների				
	1-ին չափաբաժին	2-րդ չափաբաժին	3-րդ չափաբաժին	4-րդ չափաբաժին	5-րդ չափաբաժին
Ավտոմեքենաների անվանումը	Տոյոտա Քամրի մակնիշի ա/մ	Մերսեդես Բենց E300T մակնիշի ա/մ	ԳԱԶ 3110-101 մակնիշի ա/մ	ՎԱԶ 2107 մակնիշի ա/մ	ՎԱԶ 21214 մակնիշի ա/մ
2018թ. Համար նախատեսվում է	**1213500 ՀՀ դրամ**	**1161500 ՀՀ դրամ**	**1101000 ՀՀ դրամ**	**880500 ՀՀ դրամ**	**1143500 ՀՀ դրամ**
Բռնկման համակարգի ստուգում	4,000	4,000	3,000	3,000	3,000
Կցորդման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	[redacted]				3,000
Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3,000	30,000	3,000	3,000	3,500
1.Շարժիչ					
Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	25,000	25,000	25,000	25,000	25,000
Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	30,000	30,000	30,000	30,000	30,000
Վառոցքի մոմի բնիկի նորոգում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	12,000	12,000	10,000	10,000	10,000
Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	10,000	10,000	8,000	8,000	8,000
Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	15,000	15000	10,000	10,000	10,000
Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	50,000	50,000	30,000	30,000	25,000
Ծնկաձև լիսեռի հղկում	15,000	15,000	10,000	10,000	10,000
Ծնկաձև լիսեռի փոխարինում	100,000	100,000	70,000	60,000	70,000
Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	30,000	30,000	15,000	15,000	20,000
Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	20,000	20,000	15,000	15,000	15,000
Ծնկաձև լիսեռի ուղղում	8,000	8,000	8,000	8,000	8,000
Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7,000	7,000	5,000	5,000	5,000
Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	10,000	10,000	8,000	8,000	8,000
Շարժիչի բլոկի փոխարինում	140,000	14,000	10,000	80,000	100,000
Մխոցի փոխարինում 1 հատ	15,000	15,000	10,000	10,000	10,000

Բաշխիչ լիսեռի փոխարինում	25,000	25,000	20,000	20,000	20,000
Բաշխիչ լիսեռի ականոցների փոխարինում	15,000	15,000	10,000	10,000	10,000
Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	7,000	7,000	5,000	5,000	5,000
Փոկանիվի փոխարինում	10,000	8,000	5,000	6,000	6,000
Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	10,000	10,000	10,000	10,000	10,000
Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	20,000	20,000	13,000	15,000	14,000
Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	8,000	8,000	6,000	6,000	6,000
Շարժիչի քարտերի մաքրում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	17,000	18,000	12,000	12,000	12,000
Շարժիչի յուղի մղիչի նորոգում	10,000	10,000	8,000	8,000	8,000
Շարժիչի յուղի մղիչի մաքրում	8,000	8,000	5,000	5,000	5,000
Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	6,000	6,000	6,000		
Յուղի ծորակի փոխարինում	5,000	5,000	5,000		
Օդաքաշակ փողրակի փոխարինում	10,000	10,000	5,000	5,000	5,000
Բ/լիսեռի կափարիչի փոխարինում	12,000	12,000	8,000	8,000	8,000
Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Թափանիվի փոխարինում	25,000	25,000	20,000	20,000	20,000
Թափանիվի առանցքակալի փոխարինում	18,000	20,000	14,000	14,000	14,000
Շարժիչի կափույրի փոխարինում	12,000	12,000	7,000	8,000	8,000
Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	8,000	8,000	5,000	6,000	6,000
Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	22,000	22,000	15,000	15,000	16,000
Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	25,000	25,000	20,000	20,000	20,000
Ատամնանիվի փոխարինում	15,000	15,000	12,000	10,000	12,000
Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	18,000	18,000	5,000		8,000
Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	8,000	8,000	5,000		8,000
Սուխարիկ փոխարինում 1կ/տ	10,000	10,000	10,000	10,000	10,000
Շարժիչի հանդարտիչի փոխարինում				8,000	
Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	8,000	8,000	5,000		5,000
Շարժիչի առջևի կափարիչի և միջադիրի փոխարինում	15,000	15,000	10,000	10,000	10,000
Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	15,000	15,000	8,000		8,000
Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	5,000	5,000	3,000	3,000	3,000
Ծնկաձև լիսեռի կարգավորող տափողակի տեղի նորոգում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Կափյուրների հղկում 1 հատը	2,000	2,000	2,000	2,000	2,000
Կափյուրի բնիկի նորոգում /գնեզդո/	1,500	1,500	1,500	1,500	1,500
Պարազիտ լիսեռի հղկում և վռանի տեղադրում	8,000	8,000	8,000	5,000	5,000
Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
Յուղի փոխարինում (կիսասինթետիկ)/1 լիտր	3,000	3,000			
Յուղի փոխարինում (միներալ)/ 1 լիտր			2,000	2,000	2,000
Յուղի հավելում	3,000	3,000	2,000	2,000	1,800

Յուղի զտիչի փոխարինում	5,000	5,000	3,000	3,000	3,000
Համակարգչային ախտորոշում	3,000	3,000			
Յուղի ռադիատորի փոխարինում	12,000	12,000	8,000		
Յուղի ռադիատորի նորոգում	6,000	6,000	6,000		
Շարժիչի կոլեկտորի փոխարինում	18,000	18,000	14,000	14,000	16,000
Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	15,000		8,000	8,000	8,000
Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Օդի զտիչի փոխարինում	4,000	4,000	3,000	3,000	3,000
Օդի ծախսի տվիչի փոխարինում	10,000	10,000			
Օդի ծախսի տվիչի ռետինե խողովակի փոխարինում	4,000	4,000			
Օդի զտիչի փողրակի փոխարինում	4,000	4,000	4,000	4,000	3,500
Կարբյուրատորի փոխարինում					25,000
Կարբյուրատորի վերանորոգում					20,000
Ինժեկտորի բոցամուղի փոխարինում	12,000	12,000	8,000	8,000	
Ինժեկտորի բոցամուղի մաքրում	4,000	4,000	4,000	4,000	
Բոցամուղի կարգավորում	3,000	3,000	3,000	3,000	
Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	7,000	7,000	5,000	5,000	
Բենզամղիչի փոխարինում	30,000		15,000	10,000	15,000
Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	10,000	10,000	5,000	5,000	5,000
Վառելանյութի խողովակի փոխարինում	5,000	5,000	4,000	4,000	4,000
Բոնկման կարգավորում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Ղեկավարման բլոկի փոխարինում	10,000	10,000	8,000		5,000
Վառելիքի բաքի փոխարինում	20,000	20,000	15,000	15,000	15,000
Վառելիքի բաքի մաքրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	7,000	7,000	5,000	5,000	5,000
Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	6,000	6,000	4,000	4,000	4,000
Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	10,000	8,000			
Յուղի ճնշման տվիչի փոխարինում	6,000	6,000	4,000	4,000	4,000
Պացոսի ճոպանի փոխարինում				5,000	
Պացոսի ճոպանի նորոգում				4,000	
Սառեցման և արտածման համակարգ					
Հովհարի փոխարինում	1,000	10,000	7,000	6,000	7,000
Հովհարի փոկի փոխարինում	6,000	6,000	5,000	4,000	4,000
Ռադիատորի փոխարինում	25,000	25,000	15,000	10,000	15,000
Ռադիատորի նոոգում	10,000	10,000	10,000	8,000	10,000
Ընդարձակող բաքի փոխարինում	20,000	20,000	8,000	10,000	8,000
Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Հովհարի շարժիչի փոխարինում	10,000	10,000	6,000	6,000	6,000
Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	12,000	12,000	10,000	10,000	10,000

Վառարանի շարժիչի փոխարինում	12,000	12,000	10,000	10,000	10,000
Թերմոստատի փոխարինում	6,000	6,000	6,000	6,000	5,000
Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	15,000	15,000	10,000	10,000	12,000
Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Գեներատորի փոկի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Թերմոստատի միջադիրի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Խլարարի փոխարինում	18,000	18,000	14,000	14,000	15,000
Խլարարի նորոգում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	6,000	6,000	6,000	6,000	6,000
Խլարարի անուրի (хамут) փոխարինում	2,500	2,500	2,500	2,500	2,500
Խլարարի ներդիրի փոխարինում	3,500	3,500	3,500	3,500	3,500
Խլարարի կախոցի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Հովացման հեղուկի փոխարինում	10,000	10,000	10,000	8,000	8,000
Կցորդում և ՓՏ					
Աշխատանքային կամ գլխ. գլանի փոխարինում	15,000	15,000	8,000	8,000	8,000
Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	8,000	8,000	4,000	4,000	4,000
Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	35,000	35,000	20,000	15,000	20,000
Կցորդման ոտնակի փոխարինում	15,000	15,000	10,000	10,000	12,000
Կցորդման երկժանիի փոխարինում	[redacted]	15,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	100,000	100,000	80,000	50,000	40,000
ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	80,000	80,000	40,000	40,000	30,000
ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	15,000	15,000	10,000	10,000	8,000
ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	5,000
ՓՏ-ի պատյանի փոխարինում	50,000	50,000	30,000	30,000	25,000
ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	20,000	20,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	[redacted]	30,000	25,000	20,000	25,000
ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	[redacted]	15,000	15,000	20,000	20,000
ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	[redacted]	15,000	15,000	10,000	10,000
ՓՏ-ի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում	[redacted]	15,000	10,000	10,000	10,000
ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	[redacted]	20,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	[redacted]	20,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի բարձիկի փոխարինում	10,000	15,000	8,000	8,000	8,000
ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	[redacted]	15,000	12,000	12,000	12,000
ՓՏ-ի յուղի փոխարինում	20,000	20,000	12,000	12,000	12,000
Վազքաչափի շարժաբերի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	10,000
Փոխարկման մեխանիզմի կապրոնների փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Կցորդման եղանի փոշեթիկնոցի փոխար.	[redacted]	8,000	4,000	4,000	4,000
Կցորդման կարգավորում	4,000	4,000	4,000	4,000	4,000

Կցորդման ոտնակի կարգավորիչ տափոդակների փոխարինում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Կցորդման գլխավոր գլանի հեղուկի տարայի փոխարինում	15,000	15,000	8,000	8,000	8,000
Փոխանցումը կարգավորող ձողի փոխար.	[redacted]	15,000	12,000	12,000	12,000
Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	[redacted]				20,000
Բաշխիչ տուփի փոխարինում					25,000
Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում					15,000
Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում					15,000
Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում					10,000
Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում					10,000
Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում					15,000
Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում					15,000
Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում					12,000
Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում					10,000
Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում					6,000
Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում					8,000
Կարդանային լիսեռի փոխարինում			30,000	25,000	25,000
Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում			8,000	8,000	10,000
Բաշխիչ տուփի կալունակի փոխարինում					8,000
Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում					10,000
Կարդանային լիսեռի միջ. կախոցի փոխարինում			12,000	10,000	12,000
Կարդանի հեղույսի փոխարինում			2,000	2,000	2,000
ԲՏ-ի ելուստի փոխարինում /ֆլանեց/					5,000
ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում					8,000
ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում					5,000
ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում					3,000
ԲՏ-ի արգելակման աշխատանքային գլանի փոխարինում					10,000
Առջևի և հետևի կամրջակներ					
Առջևի կամրջակի նորոգում	[redacted]				15,000
Առջևի կամրջակի փոխարինում					25,000
Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) նորոգում					20,000
Առջևի կամրջակի կիսաառնու փոխարինում					15,000
Առջևի կամրջակի կիսաառնու առանցքակալի փոխարինում					10,000
Առջևի կամրջակի կիսաառնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում					5,000
Կամրջակի յուղի փոխարինում		8,000	8,000	8,000	8,000
Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի փոխարինում					5,000
Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում					10,000
Հետևի կամրջակի փոխարինում		70,000	50,000	30,000	40,000
Հետևի կամրջակի նորոգում		50,000	35,000	25,000	35,000
Հետևի կամրջակի կիսաառնու փոխարինում		30,000	25,000	20,000	20,000
Հետևի կամրջակի կիսաառնու առանցքակալի փոխարինում		20,000	15,000	12,000	12,000
Հետևի կամրջակի կիսաառնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում		5,000	5,000	5,000	5,000
Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի փոխարինում		7,000	7,000	7,000	6,000
Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում		25,000	15,000	15,000	20,000
Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի	[redacted]				10,000

նորոգում					
Կամրջակի տվիչի փոխարինում			8,000	7,000	7,000
Առջևի կիսասռնիները միացնող ագույցի փոխարինում	18,000				15,000
Առջևի կամրջակի շրջադարձի բռունցքի փոխարինում					15,000
Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակի փոխարինում					5,000
Սատելիտների հավաքման իրանի և սռնիի փոխարինում		25,000	20,000	15,000	15,000
Կախոց					
Տրավերսի փոխարինում		30,000	25,000	20,000	25,000
Ձախ կամ աջ հոդակապի փոխարինում	8,000	8,000	5,000	5,000	5,000
Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	12,000	12,000	7,000	7,000	7,000
Առջևի անվակունդի փոխարինում	15,000	15,000	10,000	10,000	10,000
Հետևի անվակունդի փոխարինում	12,000	12,000	8,000	8,000	8,000
Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	8,000	8,000	5,000	5,000	5,000
Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)	10,000	10,000	5,000	5,000	5,000
Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկերի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոցի փոխարինում	1,500	1,500	1,500	1,500	1,500
Շկվորնու փոխարինում			3,500		
Ռեզբավոյի փոխարինում			4,000		
Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	10,000	10,000	8,000		8,000
Առջևի զսպանակի փոխարինում	20,000	20,000	12,000	10,000	12,000
Առջևի ցնցամեղմիչի փոխարինում	25,000	20,000	15,000	10,000	12,000
Հարվածամեղմիչի վոռանների փոխարինում	6,000	6,000	4,000	3,000	4,000
Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	8,000	7,000	5,000	5,000	4,500
Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում	3,000	3,000	2,500	2,500	3,000
Գնդե հոդակապերի փոխարինում	8,000	8,000	5,000	3,000	5,000
Կայունարարի փոխարինում	20,000	20,000	10,000	15,000	15,000
Առջևի կայունարարի վոռանների փոխարինում	8,000	8,000	5,000	5,000	5,000
Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում					
Հետևի կայունարարի վոռաների փոխարինում					
Կայունարարի կալունակի փոխարինում	8,000		5,000	5,000	5,000
Հետևի զսպանակների փոխարինում	18,000			10,000	18,000
Զսպակի փոխարինում			25,000		
Զսպակի վոռանների փոխարինում 1 հատ			8,000		
Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	18,000		14,000	16,000	12,000
Հետևի հարվածամեղմիչի վոռանների փոխարինում	6,000		4,000	4,000	4,000
Անվակունդի դարձռվի կանգնակի փոխարինում	15,000		10,000	80,000	8,000
Զսպակի մետաղական վոռանների փոխարինում			4,000		
Ստրումյանկի փոխարինում			4,000		
Զսպակի ականջողի փոխարինում			4,000		

Զսպակի ականջողի հեղույսի փոխարինում	[redacted]		1,500	[redacted]	
Զսպակի մեկուսացնող ռետինե միջադիրի փոխարինում բոլոր աշխատանքները ներառյալ			8,000		
Անվակունդի առանցքակալների բացակի կարգավորում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Ղեկային մեխանիզմ					
Ղեկասյունակի(ՍՏսՏվՍՈ) հիմնական նորոգում,	25,000	25,000	15,000	10,000	15,000
Ղեկասյունակի(ՍՏսՏվՍՈ) արորիկի փոխարինում	8,000	8,000	7,000	5,000	8,000
Ղեկասյունակի (ՍՏսՏվՍՈ) առանցքային սոնու փոխարինում	15,000	15,000	10,000	8,000	10,000
Ղեկասյունակի(ՍՏսՏվՍՈ) խաչուկների փոխարինում	8,000	8,000	5,000	4,000	5,000
Ղեկասյունակի(ՍՏսՏվՍՈ) վերանորոգման հավաքածույի փոխարինում	20,000	20,000	15,000	12,500	12,000
Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	7,000	7,000	7,000	7,000	7,000
Ղեկասյունակի պատյանի փոխարինում	6,000	60,000	6,000	6,000	6,000
Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	15,000	15,000	8,000	5,000	6,000
Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	7,000	7,000	5,000	5,000	5,000
Ղեկային կալունի ձգանների փոխարինում	12,000	12,000	10,000	8,000	10,000
Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	10,000	10,000	8,000	5,000	8,000
ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	8,000	8,000	5,000	5,000	5,000
ՂԿ-ի հոդակապերի փոխարինում	8,000	8,000	7,000	5,000	6,000
Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	30,000	28,000	20,000	[redacted]	15,000
Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	20,000	20,000	14,000		10,000
Հիդրոուժեղարարի փոկի փոխարինում	5,000	5,000	5,000		5,000
Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	8,000	8,000	6,000		6,000
Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	8,000	8,000	6,000		6,000
Ղեկային ձգաձողի փոխարինում	20,000	20,000	15,000	10,000	12,000
Ղեկային ձողի գնդե հոդակապի նորոգում	10,000	10,000	8,000	6,000	8,000
Ղեկային ձգաձողի ձգանների փոխարինում	10,000	10,000	6,000	4,000	8,000
Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում	8,000	8,000	5,000	4,000	5,000
Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	4,000	4,000	4,000	[redacted]	4,000
ՂԿ յուղի փոխարինում	6,000	6,000	4,000	4,000	4,000
ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000
Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում	8,000	8,000	5,000	[redacted]	5,000
Հիդրոուժեղ. յուղի տարայի խուփի փոխարինում	2,000	2,000	1,500		1,500
Արորիկի և որդնակի առանցքների մեջ բացակների կարգավորում	6,000	6,000	6,000	5,000	6,000
Հիդրոուժեղարարի փոկանիվի փոխարինում	7,000	7,000	4,000	[redacted]	4,000
Արգելակային համակարգ					
Վակումային ուժեղարարի փոխարինում	30,000	28,000	20,000	15,000	18,000
Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000

Վակումային ուժեղարարի նորոգում	20,000	20,000	15,000	15,000	15,000
Գլխ. գլանի փոխարինում	15,000	15,000	10,000	10,000	12,000
Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	12,000	12,000	10,000	8,000	10,000
Աշխատանքային գլանի փոխարինում	8,000	8,000	5,000	5,000	5,000
Աշխատանքային գլանի հիմնական նորոգում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Առջևի սուպպորտի փոխարինում	18,000	18,000	12,000	10,000	12,000
Առջևի սուպպորտի վերանորոգում	15,000	15,000	8,000	8,000	8,000
Արգելակային փողրակի փոխարինում	5,000	5,000	4,000	3,000	4,000
Արգելակային համակարգի օդահանում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Սկավառակային կոճղակների փոխարինում	10,000	10,000	5,000	5,000	8,000
Թմբուկային կոճղակների փոխարինում			10,000	10,000	10,000
Հետևի արգելակային թմբուկների փոխա.			18,000	15,000	16,000
Առջևի արգելակային թմբուկների փոխարինում					
Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	20,000		15,000	12,000	15,000
Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	5,000		5,000	5,000	5,000
Հետևի արգելակային թմբուկի հղկում 1հատ			6,000	6,000	6,000
Ձեռքի արգելակի փոխարինում	12,000	12,000	8,000	6,000	8,000
Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	8,000	8,000	6,000	6,000	6,000
Հետևի արգելակների կարգավորում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Արգելակային համակարգի լվացում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Արգելակային հեղուկի փոխարինում	6,000	6,000	6,000	6,000	6,000
Էլեկտրասարքավորում					
Գեներատորի փոխարինում	50,000	50,000	25,000	15,000	20,000
Գեներատորի վերանորոգում	25,000	25,000	10,000	8,000	10,000
Գեներատորի փոկանիվի փոխարինում	10,000	10,000	8,000	6,000	8,000
Մեկնարկիչի վերանորոգում	25,000	25,000	20,000	10,000	18,000
Մեկնարկիչի փոխարինում	60,000	50,000	30,000	20,000	25,000
Մեկնարկիչի ածուխների փոխարինում	8,000	8,000	5,000	5,000	5,000
Առջևի լապտերի փոխարինում	50,000	40,000	20,000	15,000	15,000
Սարքերի պանելի վերանորոգում	15,000	15,000	10,000	10,000	10,000
Հետևի լապտերի փոխարինում	40,000	35,000	15,000	10,000	15,000
Առջևի լապտերների կարգավորում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Վազքաչափի փոխարինում	10,000	10,000	5,000	5,000	5,000
Չափիչ սարքերի փոխարինում	10,000	10,000	4,000	4,000	4,000
Չափիչ սարքերի նորոգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Ապակելվացիչի փոխարինում	8,000	8,000	5,000	5,000	5,000
Ապակելվացիչի շարժիչի փոխարինում	15,000	15,000	8,000	8,000	8,000
Ապահովիչների փոխարինում	100	100	100	100	100
Ապակեամբարձիչների փոխարինում	15,000	15,000			-

Էլեկտրական տվիչների փոխարինում	4,000	4,000	3,000	3,000	3,000
Տրամլյորի փոխարինում	[redacted]			10,000	[redacted]
Տրամլյորի վերանորոգում				6,000	
Ռոտորի փոխարինում				4,000	
Տրամլիորի կափարիչի փոխարինում				2,000	
Տրամլիորի կոնտակտի փոխարինում				1,500	
Տրամլիորի շարժաբերի փոխարինում				3,000	
Ցուցիչի փոխարինում	6,000	6,000	4,000	4,000	4,000
Պրիբորի լամպի փոխարինում	300	300	300	300	300
Հետևի լամպերի պանելի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000
Էլ.լարերի վերանորոգում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Ավտոմեքենայի սրահ					
Արտաքին հայելիների փոխարինում	25,000	2,000	12,000	8,000	10,000
Նստատեղի վերանորոգում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Դռան փականի փոխարինում	10,000	10,000	6,000	6,000	6,000
Դռան դրսի բռնակի փոխարինում	12,000	12,000	7,000	6,000	7,000
Դռան ներսի բռնակի փոխարինում	8,000	8,000	4,000	4,000	4,000
Դռների ռետինների փոխարինում	8,000	8,000	6,000	6,000	6,000
Դռների ապակիների ռետինների փոխարինում	5,000	5,000	3,000	3,000	3,000
Լամպի փոխարինում	2,000	2,000	1,000	500	1,000
Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ	20	20	20	20	20
Դիմապակու փոխարինում	60,000	60,000	30,000	25,000	25,000
Այլ ծառայություններ					
Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 կտորի համար	25,000	25,000	25,000	25,000	25,000
Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում գին 1 կտորի համար	5,000	5,000	5,000	5,000	5,000
Եռակցման աշխատանքներ գին 1սմ (գծ.մ) համար	1,000	1,000	1,000	1,000	1,000
Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար	7,000	7,000	7,000	7,000	7,000
Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար	3,000	3,000	3,000	3,000	3,000
Ավտոմեքենայի շարժիչի լվացում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Անվադողի վերանորոգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
Անվադողի փոխարինում	500	500	500	500	500
Անիվի բալանսավորում	500	500	500	500	500
Անիվի վալց	1,000	1,000	1,000	1,000	1,000
Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	1,000	1,000	1,000	1,000	1,000
Ավտոմեքենայի առջևի կողային ապակու փոխարինում	12,000	12,000	7,000	5,000	7,000
Ավտոմեքենայի հետևի ապակու փոխարինում	30,000	30,000	15,000	12,000	15,000
Ավտոմեքենայի հետևի կողային ապակու փոխարինում	10,000	10,000	5,000	5,000	5,000
Բեռնախցիկի փականի փոխարինում	7,000	7,000	5,000	5,000	5,000
Բեռնախցիկի ռետինի փոխարինում	8,000	8,000	5,000	4,000	4,000
Դռան պաստառի փոխարինում	10,000	10,000		5,000	5,000

Պաշտպանիչի փոխարինում 1 հատը			5,000		
Գորգիկի փոխարինում 4 հատը	8,000	8,000	5,000	5,000	5,000
Ընդհանուր ծառայության գումարը	15,000	15,000	8,000	5,000	8,000
	3,217,920	3,553,420	2,578,420	2,328,420	2,865,220

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան

Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

Հ/հ900232351024

ՀՎՀՀ 06901936

----------Ա.Ասլանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Վ.ՆՍ ՄԵՐՎ ՍՊԸ

Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ 1150002715650100

ՀՎՀՀ 06940308

----------Վ. Գրիգորյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 28» փետրվարի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ18/30 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-5	34331300				990000	1485000	1980000	2475000	2970000	3465000	3960000	4455000	4950000	5500000	5500000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան

Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

Հ/Հ900232351024

ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Վ.ՆՍ ՍԵՐՎ ՍՊԸ

Ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1բ

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ 1150002715650100

ՀՎՀՀ 06940308

----------Վ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.